հարաբերություններին բաց ծանոթ նրա գրիչը։ Ամենուր է անկաշկանդ, առանց ճիգերի։ «Մեր գյուղի մոտերքում» վիպակը գրված է ռոմանտիկական արտաքին հայացքներով, թեպետ տեղ-տեղ երևում է նաև ռեալիստական շաղախը։ Գիրքը է երգիծանքի հնարներին։ Նրանք գիտեն հումորն է երևան բերում բացահայտման միջոցը, վիպական կյանքի խոցերը դիմագրավելու։ Արմենի առաջարկած «հարերը» շատ դառն են ու այրող։ Ռոմանտիկան մեր արվեստին խորթ բան չէ, ընդհանրապես, նրա կենսական ու այնքան անհրաժեշտ օդակներից մեկն է։ Արմենի վիպակներում արտահայտված ռոմանտիզմը գրական հաստատման, մարդու հոգեկան աշխարհի կատարելագործման զազափարի պայծառ լիցքն է։ Նա արտացոլում է իրականությունը ուրախի իդեալի հայեցողությամբ։

Մտահղացման ու գեղարվեստական կատարման առումով սքանչելի հատված է գյուղի վերին քարափին նստած ու երկու Մամբրեների հրաժեշտի նկարագրությունը։ Վաղ արշալույսին երիտասարդ սրտերը իրենց սիրո ու երազի խոստովանությունն են անում, Արմենը այս հատվածում երեք հերոսների հոգեբանությունը բացահայտում է աշխույժ դիալոգների միջոցով։ Հեռարքիր է մտածված նաև սկսնակ բանաստեղծի՝ Հայկի կերպարը, որն իրեն անվանում է Հայնե Խուտուտացի։ Երկու Մամբրեների բնավորության նոր գծերը ավելի ցայտուն դարձնելու, թերևս նրանց կերպարները ինչ-ինչ կողմերով լրացնելու համար է ստեղծված նաև երրորդ Մամբրեի՝ Մամբրե Բլանցի կերպարը, որը նույնպես առանձին ուշադրություն է գրավում։ Ընդհանրապես Արմենի վիպակները հարուստ ենթատեքստ ունեն, և հերոսների հոգու խորքը նայելիս, նրանց արարքները գնահատելիս շատ ուրույն գծեր, նրբերանգներ կարելի է առանձնացնել։ Հենց այս տեսանկյունից ևս արժեքավորվում են Արմենի «Վարդավանք» ու «Կենցաղային սկավառակներ» վիպակները, որոնցից երկրորդը հատկապես վերին շրջանի մեր երգիծական ոչ հարուստ արձակի մեջ նշանակալի բարձրություն է բերում։ Հաճելի է նշել, որ գրված լինելով շուրջ տասը տարի առաջ՝ «Կենցաղային սկավառակներ» վիպակը շատ սուր ձևով մերկացնում է կեղծիքը, այբակապությունը, ծաղրում է Վարդ-Թորոսյանների «մեքենաները»։ Ցավոտ հարց է բարձրացրել գրողը և մի փոքրիկ արհեստանոցի փաստով խտացրել մեր օրերում դեռևս խրախնց ամբիալի «օրինականությունը»։ պահպանող բյուրոկրատիզմը, կարծրացած չինովնիկությունը։ Տպավորիչ խարակտերներ են դարձել մեքենագրուհի Էլլանորան, հաշվապահը, արհեստանոցի վարիչ Վարդ-Թորոսյանը։ Ամեն մեկը բնութագրվում է անհատական «ձայնով», դառնում այնպիսի հատկանիշների կրող, որի զարգացումը տանում է դեպի հավաքական տիպը։

Իսկ թերությունն՞ը։ Որքան՝ էլ դա տարօրինակ հնչի՝ Արմենի հիմնական թերությունը նրա արժանիքների հետևանքն է, նրա առավելության մեջ պետք է փնտրել։ Գրողի անդադար որոնումները, նոր բնավորություններ, գեղարվեստական նոր ձևեր գտնելու անվերջ փորձերը իրենց հետ բերում են մի անցանկալի երևույթ։ Հաճախ տեսնում ենք անբնական կացություններ, մարդկային փոխհարաբերությունների մեջ ինչ-որ արհեստականություն։ Արմենի մոտ ուժեղ է հումորը և նրա շատ ստեղծագործություններում այդ առանձնահատկությունը հաճելիորեն արտահայտվում է։ Բայց միշտ չէ խրախուսելի, երբ հերոսների անհատականության մեջ մուծում է կոմիկական տարր։ Մեզ թվում է, որ Արմենը երեք վիպակներում էլ մի շարք կերպարների ու հանգամանքների նկարագրության ժամանակ անխուլ է վարվել։ Դրանից առանձնապես տուժել է «Վարդավանք»։ Թերևս պատճառը ստեղծագործության ձևի, արտահայտչական եղանակների նորությո՞ւնն է։ Այստեղ Արմենի որոնումները ավելի լայն ծավալ են ստացել, բայց ոչ հավասար վարպետությամբ է նա բոլոր «օդակները» միմյանց հագուցել։ Կարծում ենք, արվեստի մեջ իրականի ու երևակայականի միջև խիստ հակասություն չպետք է լինի։ Նույնիսկ դրանք առանձին-առանձին չպետք է զգացվեն, պետք է զուգորդվեն ներդաշնակորեն։

Արմենն-գրողի մոտ ուժեղ է երևակայությունը, բայց համեմատաբար թույլ է իրական կյանքի շունչը։ Եվ ահա առաջանում է անցանկալի ճեղքվածք։ Իսկ ընթերցողը, որքան էլ հիացած լինի նրա երկերի փայլով, կառուցվածքով, առատ հումորով և այլն, չի կարողանում, այնուամենայնիվ, որոշ թերահավատությունից ու կասկածանքից ազատվել։

Ինչևէ, անկախ թերություններից, Արմենի վիպակները հարստացնում են նրա ստեղծագործական ակտիվը։ Թեմատիկան արձակագրի նոր որոնումները խոստանում են արվեստի ավելի կատարյալ երկեր՝ տաղանդի նոր արդյունավորումով։

ԱՋԵՐՆԵԾՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

Ադրբեջանը ինքնագիր տարվա պաշտամ զգալի տեղ է հատկացրել Սովետական Միության եղբայրական ժողովուրդների գրողների երկերի հրատարակությանը։

Այս տարի լույս կտեսնեն Ադրբեջանում ապրող և ստեղծագործող մի շարք հայ արձակագիրների և բանաստեղծների երկերը։ Դրանցից են Աբանես Սենայի «Կյանքի հետ» խորագիրը կրող բանաստեղծությունների նոր ժողովածուն, Բ. Ոսկրաբյանի «Մարդը» վեպը, Իսահակ Ալավերդյանի պատմվածքների ժողովածուն։ Հրատարակչական պլանի մեջ են նաև Բագդասարյանի, Սոկրատ Խանյանի, Վլադիմիր Աբրահամյանի, Սերո Աբրահամյանի, Հովհաննես Բալչուճասի, Ոսկիկ Կարակոզյանի, Արմեն Հովհաննիսյանի ժողովածուները։

Ադրբեջաներեն բարգմանությամբ լույս կտեսնի արձակագիր Ս. Այվազյանի «Տուր ձեռդ, կյանք» վեպը։

Բանասիրական

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ՄԻ ԵԶԱԿԻ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայ միջնադարի խոշոր օրենսգետ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը անցյալի հայ իրավաբանական մտքի հանճարեղ բյուրեղացումն ու գագաթն է։ Ուստի երբեք վերաբերող յուրաքանչյուր նոր փաստ արժանի է հատուկ ուշադրության։

Մի քանի տարի առաջ, Մխիթար Գոշի և Սբ. Հրաշք Սպարապետի Դատաստանագրքերի հետ ուղեկցվող գիտական քննարկումների առիթով, մենք վերանայելիս այդ երկերի մեր Մատենադարանում պահպանվող բոլոր ձեռագրերը, ինչպես նաև համապատասխան գրականությունն ու ձեռագրացուցակները։

Այդ որոնումները առիթ հանդիսացան մի շարք կարևոր եզրակացությունների (քննարկված Մատենադարանի գիտ. խորհրդում), որոնցից այստեղ կդանդաղենք ամփոփ հաղորդում կատարել միայն մեկի կապակցությամբ։

Վերոհիշյալ որոնումների ժամանակ մեր Մատենադարանում երևան եկավ Մխիթար Գոշի Դատաստանագրքի մի ձեռագիր և ցարդ չուսումնասիրված բնագրնականություն։ Խոսքը վերաբերում է N 6398 ձեռագրում պահպանված Դատաստանագրքի օրինակին, որն արժանի է հատուկ ուշադրության մի շարք պատճառներով։ Նշենք դրանցից կարևորները։

Ինչպես հայտնի է, Մխիթար Գոշի Դատաստանագրքի հմուտ հրատարակողն ու հրատարակողը՝ Վ. Բաստամյանցը, ուշադրություն դարձնելով այդ երկի առաջին մասի 113-րդ հոդվածի վրա, ժամանակին նկատել է, որ այն եղծված է ոմն կաթուղիկի կողմից՝ հանուն «Հռովմա պապի գահիրիցության անձեռի գագաթանի»։ Ու չնայած նա հարուստ փաստարկումներով համոզիչ դարձրեց իր կարծիքը, բայց և այնպես երբեք չհաղորդեց ցույց տալ Մխիթար Գոշի Դատաստանագրքի մի այնպիսի բնագրնականություն, որի մեջ նշված հոդվածը գերծ լիներ այդ փոփոխություններից։ Ավելին. հետագայում այդ խնդրին անդրադարձող մասնագետները նույնպես չկարողացան մի մի փաստ «Պապին վերաբերյալ պարբերությունը բոլոր ձեռագրերը առանց բացառության կդեղեն, այնպես ամփոփեց այդ հարցը ոչ շատ առաջ մի մասնագետ («Բազմավեպ», 1949, էջ 116—123)։ Էլ չենք խոսում այն մասին, թե ինչպես այդ ազատվածի փաստի հիման վրա էլ կաթոլիկական ուղղության պատկանող մասնագետները՝ սկսած Մ. Չամչյանից մինչև մեր օրերը, Մխիթար Գոշին համարում են կաթոլիկ։

Եվ ահա, առաջին անգամ, մեր Մատենադարանի վերոհիշյալ N 6398 ձեռագրում, որն բնագրնականված է 14-րդ դարում, Մխիթար Գոշի Դատաստանագրքում պահպանված նեղ տեսնում վերոհիշյալ հոդվածի չխաթարված բնագիրը։ Եվ եթե Մխիթար Գոշի մինչև օրս հայտնի բոլոր Դատաստանագրքերում այդ հոդվածում հանդիպող կոչումներն ու պաշտոնները թվարկված են խառնաշփոթ կարգով, որպեսզի գերագույնի Հռոմի պապը, ապա այստեղ նրանց կարգը տրված է պատշաճ հերթականությամբ (հայրապետ, արքեպիսկոպոս, մետրոպոլիտ, եպիսկոպոս, երեց, սարկավագ, դպիր, անագնոս և փասդկամ սարկավագություն)։ Այս վերանայելի փաստը և նրա հանգամանքից ուսումնասիրությունը գալիս են լուծելու Մխիթար Գոշի Դատաստանագրքում առկա կաթոլիկական եղծումների հարցը։ Դա է N 6398 ձեռագրի առաջին խոշոր նշանակությունը։

Այդ նույն հանգամանքն ինքնին մասնաբաշխ է անում նշված ձեռագրում գտնվող բնագրնականության հայտնի արժանիքը։ Իր այդ մեկ հոդվածի այնքան որոշակի տարբերությամբ նշված ընդօրինակությունն առանձնանում է մինչև օրս հայտնի Մխիթար Գոշի Դատաստանագրքի մյուս բոլոր ձեռագրերից և ենթադրել տալիս մի այնպիսի մայր օրինակ, որն ավելի մոտ է եղել հեղինակին, քան մյուս ընդօրինակությունները՝ իրենց հիմքերով։ Կնշանակի, հեղինակային օրինակից (կամ օրինակներից) ծագել են, հիմնականում, երկու կարգի ընդօրինակություններ. կաթոլիկական ազավազմամբ և առանց այդ ազավազման։ Գայմաններն այնպես են դասավորվել, որ շազավազվածները դուրս են մղվել շրջանառությունից, իսկ փոփոխությունն կրածները՝ տարածվել։ Այստեղից հասկանալի է, որ կաթոլիկական հետամտությունը շատ վաղ ժամանակներից է սկսված եղել, այլապես պիտի մեծ տարածում գտներ հեղինակային անաղարտ-բնագիրը։ Այս առումով ուշագրավ է Վենետիկում գտնվող Մխիթար Գոշի Դատաստանագրքի հեղգուն ձեռագիրը, ընդօրինակված հեղինակի կենդանության ժամանակ, որի մեջ ևս առկա է նշված ազավազումը։ Եթե ապացուցվի, որ այդտեղ հետագայում կատարված փոփոխություններ չկան, ապա կմնա կարծելու, որ կաթոլիկական նշված փոփոխությունը կատարված է եղել հեղինակի կենդանության տարիներին։

N 6398 ձեռագրի կարևոր արժանիքներից մեկն էլ այն է, որ այն պատկանում է Մխիթար Գոշի Դատաստանագրքի առաջին խմբագրությանը։ Ճիշտ է, Վ. Բաստամյանցը նկատել էր, որ Դատաստանագրքի ձեռագրերը երկու խմբի են բաժանվում, բայց նա չէր խորացել այդ հարցի քննության մեջ։ Հետագայում միայն Վ. Հացունին անդրադարձավ այդ խնդրին և ապացուցեց, որ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը պահպանվել է երկու մեծ խմբագրությամբ։ Առաջին խմբագրություն համարեց նա այն ընդօրինակությունները, որոնց մեջ հոդվածներն առկա՝ են խառը գտավորությամբ, իսկ երկրորդ խմբագրություն՝ արդեն խմբավորված հոդվածներով մեջ հասած ձեռագրերը։ Հատ օրում, նա իրավացիորեն պնդեց, որ առաջին խմբագրությունն իր ծագումով ավելի հին է, քան երկրորդը։ Գիտի նկատել, ասկսի, որ բանասիրական միտքը, մանավանդ մեզ մոտ, համարյա շանդրադարձավ Վ. Հացունու այդ հիշատ կարծիքին։ Եվ ահա N 6398 ձեռագիրը, որպես Դատաստանագրքի ցարդ հայտնի ամենահին հիմքից ծնված օրինակ, գալիս է նորից ապացուցելու այն հանգամանքը, որ իրոք Մխիթար Գոշի Դատաստանագիրքն ունի ստեղծագործական երկու մեծ խմբագրություն, և դրանցից առաջինն ավելի հին է, քան երկրորդը։

Վերջապես N 6398 ձեռագրում պահպանված Մխիթար Գոշի Դատաստանագրքի ընդօրինակությունը արժանի է ուշադրության նաև իր համառոտված լինելով, բովանդակած նոր ձևակերպումներով, տարբերվածքներով և այլ առանձնահատկություններով։

Օգտվելով առիթից, կցանկանայինք մեր գիտական և գրական հասարակության ուշադրությունը հրավիրել մի ուրիշ կարևոր խնդրի վրա։ 1963 թվականին լրանում է Մխիթար Գոշի, այդ վիթխարի օրենսգետի, գրողի և քաղաքացու մահվան 750-ամյակը։ Ցանկալի կլիներ, որ պատշաճ եղանակով նշվեր այդ մեծ տարելիցը։

ԱՍ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՄԻ ԷՋ ԻՄ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1927 թվականն էր, Թբիլիսիի արհեստագործական դարանի դիրքից մեկը, երբ «Մարտակոչ» խմբագրությունում անսպասելի երևաց Եղիշե Չարենցը։ Նա նոր էր ելել Երևանից և իր հետ բերել էր «Հիշողություններ Երևանի ուղղիչ տնից» գրքի ձեռագիրը, ցանկանալով այն հրատարակել Թբիլիսիում։

Որպես «Զանկենիգայի» Անդրկովկասյան հրատարակչության վարչության նախագահ, սիրով համաձայնեցի հրատարակել Չարենցի «Հիշողությունները»։ Ոչ միայն ես, այլև Թբիլիսիում աշխատող այնպիսի պատասխանատու բեկերներ, ինչպես Սերգո Խանոյանը, Հարությունն Սուրխաթյանը և Արշավիր Մելիքյանը գտան, որ այդ «Հիշողությունները» պետք է անմիջապես հրատարակել։

Նույն թվականի ամռանը «Զանկենիգան», ի միջի այլոց, հրատարակեց նաև մեր մեծ վարպետի Ավետիք Իսահակյանի լրջագույն «Լիլիթը», այն ժամանակների համար օրիգինալ ձևավորումով։ Այդ լեզենդի հրատարակությունը երևանում ինչ-ինչ պատճառներով գլուխ չէր ելել։ Որոշ չափով հասկանալի էր դա. լեզենդի բովանդակությունն տանավորը էր թվացել այն օրերի «նարբյան մարքսիզմի» շատ հազած ֆիլիսոֆներին։

Չարենցը գոհ էր, որ գրականության հետ կապ ունեցող Թբիլիսիի հայ բեկերների վերաբերմունքն իր նկատմամբ շերմ էր։ Չկար նրա այնքան սիրելի Ալեքսանդր Թեոդորովիչը, բայց Չարենցը իրեն հորդացած չէր զգում, քանի որ մեզանից ամեն մեկը գնահատելով նրա բացառիկ տաղանդը, աշխատում էր ամեն կերպ այդպես, որ նա հնարավորություն ունենա ստեղծագործելու։ Չարենցի նյութական դրությունը ծանր էր այդ ժամանակ։ Նկատի ունենալով և այս հանգամանքը, «Զանկենիգան» առաջարկեց Հակոնմերբյան մեծ հեղափոխության 10-ամյակի կապակցությամբ հրատարակել նաև նրա բնիր պոեմների ժողովածուն։ Չարենցը համաձայնեց, և «Զանկենիգայի» հրատարակությամբ 1927 թվականին լույս տեսան ոչ միայն նրա «Հիշողությունները», այլև նրա պոեմների ժողովածուն։

Ահա այդ տարվա ամառվա վերջերին, մի օր «Գրոլեսաց» (նախկին «Մարտակոչ») օրաթերթի խմբագրի աշխատասենյակում հավաքվել էին Ավ. Իսահակյանը, Չարենցը և մի քանի ուրիշ բեկերներ, որոնց թվում և հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանի տղան, Համլիկ Թումանյանը, բոլորիս կողմից սիրված և համակրելի մի երիտասարդ, հայանի գրական հասարակությանը որպես Ռաֆֆիդրանաթ Թագորի «Գարտիկպանի» շնորհալի թարգմանիչ։

Երբ բեկերներից մի քանիսը դուրս եկան և մնացին միայն Իսահակյանը, Չարենցը և Համլիկը, վերջինս մոտեցավ ինձ։

— Ազատ Արտեմիչ, որքան լավ կլիներ, որ բոլորս գնայինք և միասին լուսանկարվեինք։ Ավետիքը շուտով կգա արտասահման, և ո՞վ գիտե երբ կվերադառնա։ Նկարվենք, գոնե նկարը կմնա մեզ հիշատակ։

Բոլորս հաճույքով համաձայնեցինք և լուսանկարվեցինք հենց նույն օրը Թբիլիսիի լավագույն լուսանկարչի Կոպակի մոտ։ Հետդեցի երան նկարել Ավետիք Իսահակյանին նաև առանձին, հետո նկարվեցինք երեքով, այսպես մի 3—4 նկար։ Բոլոր նկարները հաջողված էին։ Ավելի քան հաջող էր Ավետիքի նկարը։ Բայց ո՞ւր կորան այդ նկարները...

Ավ. Իսահակյան, Ե. Չարենց, Ա. Վարդանյան, Համլիկ Թումանյան։

Դրանցից մեկը (հրատարակվողը) պատահական կերպով գտնվեց Երևանի գրական թանգարանում՝ ոչ անհայտ հասարակական գործիչ և թարգմանիչ Հակոբ Սարիկյանի թղթերում, նկարի հետևում կան Ավ. Իսահակյանի, Չարենցի և իմ մակագրությունները։ Առանձնապես շերմ է Ավ. Իսահակյանի մակագրությունը՝ «Իմ վաղեմի լավ բիկեր Հակոբ Սարիկյանին— Ավ. Իսահակյան»։ Չարենցը գրել է «Հարգելի բեկ. Սարիկյանին—Չ». Չարենցը։ Հարկի, Չարենցը մոտիկից չէր ճանաչում Սարիկյանին, ինչպես Իսահակյանը, որը մոտ է եղել նրա հետ գեռ Հոկտեմբերյան հեղափոխությունից շատ առաջ։

Նայում եմ այսօր լուսանկարին, տեսնում եմ մեր մեծ պոետների անմոռանալի դեմքերը և ինչպե՞ս հավատամ, որ այն օրերից անցել է արդեն 35 տարի և այդ նվիրական անձերից հիմա ոչ ոք կենդանի չէ։ Ինչպե՞ս հավատալ, երբ նրանց կանգնած են իմ աչքերի առաջ և նա տեսնում եմ նրանց այնպիսի պայծառությամբ, որ զգում եմ նույնիսկ նրանց ներկայությունը։

Ահա Չարենցը իր ցիչ խոպոտ ձայնով ասում է ինձ.

— Մխիթի Ագասի, ես շատ եմ հոգնել, չգիտեմ ինչպես ազատվել գաճաճներից։ Գիտե՞ս ինչ, մեկ-մեկ թվում է, որ նրանց, վերջիվերջո, ինձ կխեղդեն...

ԱՂ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՆԱՄԱԿ

«Թող լսեսցեն մուզիկան».
(Թուրքերեն առած)

☆ ☆

Տպագրում ենք սովետահայ արձակագիր Կարեն Միքայելյանի (1883—1941) անտիպ պատմվածքներից մեկը։

Պատմվածքը խմբագրությանն է տրամադրել Ստ. Զորյանը։

☆ ☆

Արշակ Սիմոնիչը բարկությունից ուղղակի կատաղել էր։

Գիտեր, որ այդպես էլ պիտի լինի։ Հապար անգամ ասեց. որ չեմ ուզում տղիս անպատճառ ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ ուղարկեմ։ Տղա է, գիմնազիան ավարտել է, ուսերին կարդալ-գրել գիտի՝ հերիք է, թող հիմա դա խանութումը նստի ու իր հորը քոմակ անի։ Ամենքն էլ հարձակվեցին վրան, թե ինչի՞ ես տղիդ անբախտացնում, հիմի ո՞ր վաճառականի տղան ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ չի գնում։ Մեկը ասեց, մյուսը ասեց. կինը մեջտեղ ընկավ, ֆրանից օրինակ բերին, ֆրանսանից օրինակ բերին և վերջ ի վերջո նրան համոզեցին։ Տղին Պետերբուրգ ուղարկեց։

Բայց թե վաճառական է, խելքը գլխին մարդ է, ՖԱՆԴԵՐԸ գիտի։ Նախօրոք պարման դրեց որդուն, որ ամսական 50 մանեթից ավել չի ղրկի։ Բայց արի տես, որ իրեն խաբեցին։ Վեց ամիս չկա գնալը, արդեն 400 մանեթ ավել փող գնաց։ Էսքանը գրքի տվի, էսքանը ուսումի վարձ, էսքանը մունդիրի, էսքանը բժշկի, օթախի ու հապար ու մի կապար ՀԻՆԵՐԻՄԻ։ Ի՞նչ է, Արշակ Սիմոնիչը էստեղ ԽՍԶԻՆՆՍ է կտրում, թե Մանթաշովի հորերն ու Սավի Մարտիրոսի ֆաբրիկան է իրենը։ Երեխա՞ է, չի հասկանո՞ւմ։ Ով գիտի ի՞նչ ջնություն է անում կամ ռսի աղջիկների վրա է խարջում։ Ի՞նչ է, ինքը իսկի Մոսկով չի գնացել, չգիտի՞։

Ու նստած սեղանի կողքին, բարկությունից պոռոշներն է կրծոտում ու անհամբեր շոտկի հատիկները դես ու դեն շիկշիկացնում։

Կինը, Սոնիչկեն, պատուհանի առաջ նստած, ակնոցը աչքերին, լուռ հաշիվ է գործում ու աչքի տակով նկատում, որ մարդու բեֆը տեղը չի։ Ով գիտի, մտածում է, ՄՈՒՇՏԱՐՈՒ վրա է նիսիա փող կորցրել, կամ թե չէ ԴՈՒՔՆԻ աշկերտի ու գործակատարի ձեռին գողություն բռնել։ Նա գիտի իր ամուսնու բնավորությունը։ Այդպիսի դեպքերում չի խոսացնում, մինչև որ բարկությունը նստի։

Իսկ Արշակ-Սիմոնիչի բարկությունը չէր նստում։

Ինչպես նստի, երբ որդին նորից 300 ռուբլի փող է ուղում։ Այդ դեռ ոչինչ, որ ուղում է. արի ու տես ի՞նչ լեկվով է ուղում։ Չի խնդրում, այլ ուղղակի պահանջում է, հրամայում։ Մի տես, մի տես գրած նամակի մեջ ինչ լեկու է բանեցնում իրա հոր հետ...

— Լամիրա՛կ,— դուրս թռավ նրա բերանից։

— Ինչ է պատահել, Արշակ Սիմոնիչ,— այլևս չհամբերեց կինը։— Գողությունն խո չե՞ս բռնի։

— Ինչ գողությունն. թալա՞ն է, թալա՞ն։

— Վո՞ւյ մի, քոռանամ, էդ ո՞ւմ ի թալանիլ։

— Ո՞վ պիտի ըլի։ Քու էդ Պետերբուրգի աղա պարունը։

Կինը կռահելով, որ որդու մասին է խոսքը՝ գլուխը կախ արավ, հառաչեց ու լռեց։

— Հը՞, լիկուդ պապանձվե՞ց։ Ես չէի ասո՞ւմ։ Հերիք չի, որ փողերս քոռ ու փուչ է անում, մի տես, ի՞նչ լեկվով է խոսում հորը հետ։

Այս ասելով Արշակ Սիմոնիչը ծոցից հանեց որդու ծրարը, նետեց սեղանին, ապա ծրարից հանելով նամակը, շարունակեց.

— Սրա ականջներիդ բամբակը հանի ու լսի, իկներա մայրական սիրտդ փառավորվի։

Ու սկսեց կարդալ նամակը։ Կարդում էր ուները կիտած, բռունցքը սեղանին խփելով, ամեն մի նախադասությանը իր ռեպլիկան կպցնելով ու մի այնպիսի կայրագին ձայնով, որ կարծես սեկի հետ կռիվ էր անում։

«Սիրելի և պատվելի հայր»։

— Փորացավդ գիտի՞ս։

«Այս քանի՞ երորդ անգամն է գրում եմ քեզ և դու ինձ թողնում ես անպատասխան»։

— Սրա վո՛ւնց կուլի։

«Նյութական դրությունս շատ ծանր է։ Պարտքերի մեջ թաղված եմ։ Ուղարկածդ ամսականները ինձ չեն բավարարում։ Նորերս էլ հիվանդ էի։ Ահագին փող ծախսեցի բժիշկների վրա»։

— Խե՛ղճ իմ վուրդի...

«Միթե՞ դու կորցրել ես հայրական գութդ և ինձ չես խղճում։

«Եթե այս նամակս էլ թողնես անպատասխան, ես ուղղակի չգիտեմ թե ի՞նչ պիտի անեմ»։

— Քոռանամ բու մերդ...

«Ուստի նորից, սիրելի հայր, դիմում եմ և խընդրում եմ քեզ, նամակս ստանալուց եղիր բարի և ներող և անմիջապես, եթե կարող ես, հեռագրով ուղարկիր ինձ 300 ռուբլի։

«Քեզ սիրող, երախտապարտ և խոնարհ որդի՝ Ալեքսանդր»։

— Ալ, տեսնո՞ւմ ես ի՞նչ տեսակ բաղաբավարի, համեստ լիկվով է խոսում իր սիրելի հորը հետ խոնարհ վուրդիդ։

Արշակ Սիմոնիչը մեղմացած նստեց կողքի աթոռին, բարկությունը անցավ և անգամ ներքին գոհունակությունից ժպտաց.

— Ալ, ի՞նչ եմ ասել։ Սրա էդ տեսակ լիկվով որ գրիչ էր, ես խաբրը կկոտրիլ էի՞...

Հետևյալ օրը փոստը հեռագրով Թիֆլիսից փոխադրեց Պետերբուրգ... 400 ռուբլի։

1941.

— Դիա՞խ... Տեսա՞ր, լսեցի՞ր հրամանը։ Հեռագրո՞վ է պահանջում։ Բա ես Արշակ Սիմոնիչ չիմ, որ էդ փուղիրմեն մի դենիչկա դրկիմ...— վերջացրեց նա նամակի ընթերցանությունը։ Ապա վեր կացավ տեղից և կրունկները հատակին խփելով, բարկացած սկսեց անց ու դարձ անել սենյակում։

Սոնիչկան, որ շունչը կտրած լսում էր, վեր կացավ տեղից, անձայն քայլերով մոտեցավ սեղանին, վախվխելով նստեց աթոռին, վերցրեց նամակը և ակնոցները շտկելով սկսեց մտքումը կարդալ որդու գիրը։

Երբ վերջացրեց, նրա դեմքով մի ներողամիտ ժպիտ անցավ։ Գլուխը բարձրացրեց և հեկ, անվրդով ձայնով դիմեց ամուսնուն.

— Արշակ Սիմոնիչ, մեծ մեղք ես անում հոգուդ։ Աբա նամակի մեջ է՞դ էր գրած, որ կարդացիր։ Արի, արի, գենացվալե, մի նստի էստեղ, ես կարդամ ու դուն տես, թե ի՞նչ համեստ, նեժիսի լեկվով է խոսում մեր որդին իրա հոր հետ։

Արշակ Սիմոնիչը վարանած կանգ առավ։ Էնե, ուզում էր, որ մի խոսք ասի, երբ Սոնիչկեն սկսեց կարդալ նամակը՝ մեղմ, հանդարտ ձայնով, ամեն մի խոսքի մեջ մայրական քնքուշ գորովի շեշտ դնելով։

«Սիրելի և պատվելի հայր»։

— Քու քաղցր լեկվիդ մեռնի՞մ...

«Այս քանի՞ երորդ անգամն է գրում եմ քեզ և դու ինձ թողնում ես անպատասխան։

«Նյութական դրությունս շատ ծանր է։ Պարտքերի մեջ թաղված եմ։ Ուղարկածդ ամսականները չեն բավարարում։ Նորերս էլ հիվանդ էի։ Ահագին փող ծախսեցի բժիշկների վրա»։

— Խե՛ղճ իմ վուրդի...

«Միթե՞ դու կորցրել ես հայրական գութդ և ինձ չես խղճում։

«Եթե այս նամակս էլ թողնես անպատասխան, ես ուղղակի չգիտեմ թե ի՞նչ պիտի անեմ»։

— Քոռանամ բու մերդ...

«Ուստի նորից, սիրելի հայր, դիմում եմ և խընդրում եմ քեզ, նամակս ստանալուց եղիր բարի և ներող և անմիջապես, եթե կարող ես, հեռագրով ուղարկիր ինձ 300 ռուբլի։

«Քեզ սիրող, երախտապարտ և խոնարհ որդի՝ Ալեքսանդր»։

— Ալ, տեսնո՞ւմ ես ի՞նչ տեսակ բաղաբավարի, համեստ լիկվով է խոսում իր սիրելի հորը հետ խոնարհ վուրդիդ։

Արշակ Սիմոնիչը մեղմացած նստեց կողքի աթոռին, բարկությունը անցավ և անգամ ներքին գոհունակությունից ժպտաց.

— Ալ, ի՞նչ եմ ասել։ Սրա էդ տեսակ լիկվով որ գրիչ էր, ես խաբրը կկոտրիլ էի՞...

Հետևյալ օրը փոստը հեռագրով Թիֆլիսից փոխադրեց Պետերբուրգ... 400 ռուբլի։

1941.

«ԼԻՏԵՐԱՏՈՒՐՆԱՅԻՆ ԱՐՄԵՆԻԱ» № 1



Այս տարվա «Լիտերատուրնայա Արմենիա» հանդեսի առաջին համարն սկսվում է Մարիետա Շահինյանի «Հարյավ ի մեռելոց» վիպակով։ Այս գործը, ինչպես հեղինակն է ասում, XVII դարի անվանի չեխ կոմպոզիտոր Յոզեֆ Միսլիվեչեկի կյանքի և գործունեության հետազոտությունն է։

Հետաքրքրական է Սուրեն Այվազյանի «Ջրաղացի ճանապարհը» պատմվածքը։ Գեղարվեստական գրականության բաժնում ընթերցողը կարող է կարդալ Բարկեն Կարապետյանի «Լենինս և Իրինա Սենգովայի «երևանյան առավոտ» բանաստեղծությունները։

«Ցորսի բաժանված գիշեր». այսպես է վերնագրված Ա. Մելիք-Սիմոնյանի կինոկոմեդիայի սցենարը։ Հրանտ Բագրատյանը հանդես է եկել այս անգամ «Մանանի ձկնորսների մոտ» ակնարկով։ Կ. Ս. Ստանիսլավսկու ծննդյան 100-ամյակին է նվիրված Գուրգեն Բորյանի «Նոր թատրոնի ճարտարապետը» վերնագիրը կրող հոդվածը։

Անցած տարվա դեկտեմբերին, ինչպես հայտնի է, Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսական մանկավարժական ինստիտուտը կազմակերպեց համամիութենական առաջին «Բրյուսովյան ընթերցումներ» շաբաթը, որին մասնակցեցին նաև Սովետական Միության տարբեր քաղաքներից ժամանած բրյուսովագետներ։ Այս կապակցությամբ հանդեսի ներկա համարում լույս է տեսել Գ. Թաթոսյանի «Վ. Բրյուսովի մի քանի թարգմանական սկզբունքների մասին» հոդվածը։

«Գրքերի տեսություն» բաժնում տպագրված են Մ. Ռոշչինի «Լույսի ծարավ, երջանկության ծարավ» գրախոսականը Մ. Մարգարյանի նոր գրքի և Գ. Մնացականյանի բանաստեղծությունների նոր գրքի և Գ. Մնացականյանի «Իր տեսիլքը» գրախոսականը Արիդ Ավագյանի պատմվածքների նոր գրքի մասին։

Այս համարում ընթերցողները կարող են կարդալ գրախոսականներ Արտաշես Քալանթարյանի «Գունավոր երազներ», Ստ. Կուրտիկյանի «Ժամանակներ ու մարդիկ», Ն. Մ. Տարասովսկու «Հայաստանի ճարտարապետությունը IV—XIV դարերում» գրքերի մասին։ Սակայն հետաքրքրական չէ նաև հայկական տպագրության 450-ամյակին նվիրված նյութը։

«Հանրապետության կուլտուրական կյանքը» բաժնում կարելի է կարդալ Հայաստանի գրողների, նկարիչների և կոմպոզիտորների միությունների կուսակցական սկզբնական կազմակերպությունների զեկուցագրերի մասին, որոնք նվիրված էին կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության զեկավարների՝ Մոսկվայի գրողների ու արվեստի աշխատողների հետ ունեցած հանդիպմանը։

digitised by A.R.A.R.@